[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
18	Ապրիլ	2022 թ.		Բ	0960716405
[4] Մատուցման ամսաթիվը					
18	Ապրիլ	2022 թ.			

Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
Սերիա	Համար
Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	8	6	4	6	6	2	2	4		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[10] Անվանումը	ՄԱՐԱԼ ԶԱՔԱՐՅԱՆ Անհատ ձեռնարկատեր (ԱՁ)									
[11] Բանկային տվյալները	Ինեկոբանկ ՓԲԸ	N 2052832253521001								
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍԿՈՄԻՏԱՍԻ Պ. 1 249									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի										
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆին նախ աշխ. գործ. վարչ.	N 900011180081								
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ծավալանշող թվանշանը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Հայերեն-արաբերեն գրավոր թարգմանություն	էջ	40.5	2000		81000
Ընդամենը						81000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ KOSTANDYAN MARINE 5305680287

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

18/04/2022 17:25:03

Ծառայություն (աշխատանք) ստացող՝ GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

26/04/2022 10:22:38

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

16.03.2022թ. ք. Երևան

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ, երկրորդ դասի խորհրդական Լ.Առաքելյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 14969521 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

ՀՀ ՔԿ ԵՔԲՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 14969521 քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ ԻԻՀ քաղաքացի Ռեզա Ղոլամալի Թեհրանչին 2021 թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով ներգրավվել է որպես մեղադրյալ հանրորեն վտանգավոր այն արարքի կատարման համար, որ նա, 2020 թվականի դեկտեմբեր ամսից մինչ 2021 թվականի սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում, ուրիշի՝ առանձնապես խոշոր չափի դրամական միջոցները խարդախությամբ հափշտակելու մեկ միասնական դիտավորությամբ, ներկայանալով «Ֆորեքս» արտարժույթի արտաբորսայական շուկայի արտարժույթի փոխանակման միջազգային հարթակի աշխատանքին տիրապետող անձ, խաբեությամբ, այն է՝ գումարային մեծ ներդրումների կատարման դեպքում համապատասխան բորսայական գործարքների կատարմամբ խոշոր դիվիդենտների կուտակման և տրամադրման կեղծ խոստումներ տալով, Երևան քաղաքի Բաղրամյան պողոտա 68-րդ հասցեում տեղակայված «Համի Փրոդաքշն» գրասենյակում ՀՀ քաղաքացի Սամվել Վալոդյայի Կեսոյանից պահանջել և մաս-մաս ստացել է 85,316,080 ՀՀ դրամին համարժեք 164.000 ԱՄՆ դոլար գումար, Արմեն Արիստակեսի Հարությունյանից՝ 137,562,040 ՀՀ դրամին համարժեք 264.000 ԱՄՆ դոլար գումար, իսկ ԻԻՀ քաղաքացիներ Ֆարիդ Յունես Ֆարզանից, Մոհամմադ Զաֆար Ռահբարիից, Մասուդ Ազիզի Բեհթ Ասեիդից, Դավութ Էսմալի Ֆալլահ Մահմուդիանից, Ազիթտ Հասան Շարիֆիից, Վիդա Հոդրաթոլլահ Զարեից և Իսոսրո Ամարի Սալեհից՝ համապատասխանաբար 2,284,964 ՀՀ դրամին համարժեք 4.400, 173,753,480 ՀՀ դրամին համարժեք 334.000, 2,576,548 ՀՀ դրամին համարժեք 5,200, 3,438,050 ՀՀ դրամին համարժեք 7.000, 104,136,000 ՀՀ դրամին համարժեք 200.000, 2.590.695.6 ՀՀ դրամին համարժեք 4.980 և 54,617,744 ՀՀ դրամին համարժեք 105.000 ԱՄՆ դոլար գումարներ, ապա իր հանցավոր մտադրության ավարտին հասցնելու նպատակով խոստացել է ներդրված ողջ գումարները 2021 թվականի սեպտեմբերի 24-ին Երևան քաղաքի Բաղրամյան պողոտա 68-րդ հասցեի գրասենյակում վերադարձնել վերջիններիս, այնինչ դեռևս 2021 թվականի սեպտեմբերի 23-ին՝ հափշտակելով վերոնշյալ գումարները, մեկնել է Հայաստանի Հանրապետությունից՝ այդ կերպ խարդախությամբ հափշտակելով վերոնշյալ անձանց պատկանող առանձնապես խոշոր ընդհանուր 566.275.601.6 ՀՀ դրամին համարժեք 1.088.580 ԱՄՆ դոլար գումարը՝ վերջիններիս պատճառելով նույնչափ գույքային վնաս:

Մեղադրյալ Ռեզա Ղոլամալի Թեհրանչիի նկատմամբ հայտարարվել է միջազգային մակարդակով հետախուզում, քանի որ նախաքննության ընթացքում հնարավոր չի եղել պարզել վերջինիս գտնվելու վայրը:

Ռ.Թեհրանիչիի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը:

Նախաքննության ընթացքում հարցում է կատարվել Ռեզա Ղոլամալի Թեհրանչիի ՀՀ-ից բացակայելու հանգամանքը պարզելու համար և ստացված գրությամբ պարզվել է, որ Ռեզա Թեհրանչին դեռևս 2021 թվականի սեպտեմբերի 23-ից մեկնել է ՀՀ տարածքից, իսկ վերադարձի վերաբերյալ տվյալներ առկա չեն եղել:

11.03.2022թ. ՀՀ գլխավոր դատախազության միջոցով վարչական շրջանների դատախազություն է ստացվել ՀՀ ոստիկանության «Ինտերպոլ» ազգային կենտրոնական բյուրոյի գրությունն այն մասին, որ Ռեզա Թեհրանչին հայտնաբերվել և ձերբակալվել է ԱՄԷ իրավապահ մարմինների կողմից: Նշվել է նաև, որ ԱՄԷ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի գործընկերները խնդրել են 30-

օրյա ժամկետում այդ երկրի իրավասու մարմնին դիվանագիտական ուղիներով ներկայացնել Ռեզա Թեհրանչու վերաբերյալ էքստրադիցիոն փաթեթը՝ արաբերեն թարգմանությամբ:

Այսպիսով, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հետախուզվող Ռեզա Թեհրանչու էքստրադիցիոն փաթեթի՝ արաբերեն թարգմանությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Մարալ Զաքարյան Մարտիրոսի» ԱՁ թարգմանչական գրասենյակի թարգմանիչ Մալա Մարտիրոսի Զաքարյանին /նույնականացման բարտ՝ 005724497, տրված 15.11.2016թ. 004-ի կողմից/, ով ունի նոտարական գործողություններին մասնակցելու թարգմանչի վկայական՝ տրված ՀՀ ԱՆ-ի կողմից /վկայական թիվ 20, տրված 09.02.2015թ./:

Նկատի ունենալով, որ Մարալ Մարտիրոսի Զաքարյանը տիրապետում է հայերենին և արաբերենին, նրա ձեռնահասությունը կասկած չի հարուցում, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 53-րդ և 83-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Թիվ 14969521 քրեական գործով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հետախուզվող Ռեզա Թեհրանչու էքստրադիցիոն փաթեթի՝ արաբերեն թարգմանությունն իրականացնելու համար հրավիրել «Մարալ Զաքարյան Մարտիրոսի» ԱՁ թարգմանչական գրասենյակի թարգմանիչ Մալա Մարտիրոսի Զաքարյանին /նույնականացման բարտ՝ 005724497, տրված 15.11.2016թ. 004-ի կողմից/, ով ունի նոտարական գործողություններին մասնակցելու թարգմանչի վկայական՝ տրված ՀՀ ԱՆ-ի կողմից /վկայական թիվ 20, տրված 09.02.2015թ./:
2. Մ.Զաքարյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքներին և պարտականություններին:
3. Մ.Զաքարյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Վարչական շրջանների
դատախազության դատախազ՝ **Լ.Առաքելյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների բաղվածքները:

Իմ իրավունքներն ու պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտականության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝ Մ.Զաքարյան